# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<06>> Սեպտեմբերի 2023թ. N ՄՈ/381 - -Ա

ք. Արմավիր

**«ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Անուշ Հակոբյանի 2023 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

ո ր ո շ ու մ  ե մ՝

1. «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Հակոբյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2023 թվականի սեպտեմբերի 7-ից 13-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Անուշ Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արևհատ Հովնանյանին:
3. 2023 թվականի սեպտեմբերի 7-ից 13-ը ներառյալ «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արևհատ Հովնանյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Անուշ Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի սեպտեմբերի 14-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.09.2023 17:56:40 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**ՄԱՐԶՊԵՏ՝**

**Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**